51. ՔԵՌԻՆ ՈՒ ԽՈՐՁԵՆ

Կէղնի, չէղնի քեռի մե ու խորզե մե կէղնի։ Էդ քեռին գելնա-ծառն ու վե։ Գելնա հավու տկեն ձու մե կգողնա։

Էդ խորզեն լէ քեռու վրավեն թոմբան կդողնա, քեռին խաբար-չէղնի։

Քեռին օր ծառեն կիչնա, խորզեն կըսե.— Քեռի, քու թոմբան-ո՞ւր է։

Էն լէ կըսե.— Ես էլա ծառն ու վե, իմ թոմբան իմ վրեն էր, վո՞ն հանեց իմ վրավեն։

Կըսե.— Ես դող, դու դող. արի էրկուս էդնինք ընկեր, էրթանք-դողութեն էնինք։

Շատ կէրթան, քիչ կէրթան, թագավորի խեղնին ռաստ գիգան։ Կէրթան ղխեղնեն կգողնան։ Մեն կցրվի մեջ քաղքին։ Թագավոր-կիմնա օր ուր խեղնեն գողցած է։

Մեն կէրթա, կէրթա կհասնի ուրիշ թագավորի մե։ Թագավոր-գելնա ջուաբ կճամփե էդ թագավորին, կըսե. «Հող քու դլխու վրեն, դու իմա՞լ թագավոր ես օր քու խեղինեն կգողնան, դու չկրնաս քու գողեր զաֆթիս»։

Էդ թագավոր լէ կխանչե զուր վեզիրներ, կըսե.

— Մշավրա էնինք, իմա՞լ էնինք, իմա՞լ չէնինք օր զդող-բռնինք։

Կբերին խեղինի հ՚առեճ խոր կփորին, կբերին հորի մեջ կուբր-գըլնան։

Քեռին ու խորզեն օլոր օր գիգան գողուբեն։ Խորզեն քեռուն կըսե.

— Դու հ'առեճ գնա։

Քեռին օր հ'առեճ կէրթա, կզկի մեջ կուրրին, Խորզեն լէ գիգա ուր օտ կդնե վրը քեռու գլխուն, որ թը հ'ընցնա խեզինեն գողնա, քեռին կզկվի մըջ կբրին հարի բոկ։ Խորզեն կէրթա խեզինեն կգողնա։ Կառնի կէրթա, քեռին կմնա մրջ կրրին։

Սաբախտան գիգան կիչկին, խազինեն էլման տարած ին, կիչկին օր մե գլոխ հորու մեջ կերևա, կրսին. «էտի մեր գող չէ, ուրիշ մարթ է տարիր»։

Սաբախտան գելնան դալալ դիտան բոռալ. «Իմ գող վո՞ն է, վոն չէ, թըխ իգա, աֆու կէնիմ, փարա գիտամ»։

Քաղաք քաղքով գիգան կըսին թը՝ մենք չենք գողցեր ինք. խորզեն գիգա կըսե.

— Ես իմ գողցե։

Թագավոր խորզին կըսե.— Քըղի շատ փարա գիտամ, օր էրթաս ֆիլան թագավորի խեզինեն ճղիս, բերիս։

Կըսե.— Խեզինեն չեմ բերի, կէրթամ ղթագավոր ինք կբերիմ։

Հ'օցքի կէրթա քըրքըշու մե մոտ, կըսե.— Դու ընծի քուրք մե կարիս, ամեկ մազից զանգուլակ մե կախիս, ամեկ զանգուլակից ծեն մի հ'ելնա, քըղի շատ փարա գիտամ։

Գիտա փարեն, կառնե զքուրք, կէրթա։ Կէրթա էն մեկել թագավորի քաղաք, կկանի։

Իրիկուն օր կէղնի, կէրթա թագավորի սրախին կմտնա։ Կքնին, կխախանդին։ Կէրթա էդիկ կհագնի ուր քուրք, կէրթա թագավորի հ'առեճ, կժխշե զինք, ամեկ զանգուլակից ծեն մե գելնի, թագավոր ուր տեղ կզարղնդի, կվախենա։

Թագավոր կըսե.— Դու ի՞նչի ես օդա։

Կըսե.— Ես Գաբրել հրիշտակն իմ։

Կիսե.— Դու հ'որի՞ ես էկի։

Կըսե.— Էկեր իմ, քու հոգին կառնիմ։

Կըսե.— Իրեք օր ընձի ժամանակ տուր։

Քրքչին կթողի, ըդդիհեն կէրթա։ Իրեք օր օր կթրմմի, գիգա։ Իրիկուն օր կէղնի, գիգա մտնա սրախ. խալխ օր խախընդի, դող կհագնի զուր քուրք, դիգա, կըսե.

— Թագավո՛ր, օրն լմնցեր է, էկեր իմ քու հոգին կտանիմ.

դե, հ'ելի։ — Սնդուկ մե բերի դնե հ'առեճ, թագավորին կըսե.— Հ'ելի, մտի սընդկի մեջ։

Թագավոր դելնա կմտնա սընդկի մեջ։ Դուռ կդնե վրեն, կփակե, ու-ուրին կըսե.

— Ես կըսիմ՝ կուտու, կուտու, դու շան պես հաչըցի, օր կըսիմ՝ փիշի, փիշի, կատվի պես նվնվացի, օր կըսիմ՝ հոշ, հոշ, դու իշու պես ղռղռացի։ Ինչ տեխ օր դրեցի զքըզի, դու լէ հըմալ էնիս։ — Ու քթալե շրտներ, չաքմաչեն կշալկե ու կէրթա։

Շատ կէրթա, քիչ կէրթա, կէրթա էլման հ'առճի թագավորի քաղաք։

Թագավոր կխանչե ղուր վեղիրներ դիվան, չխոցուկ ին ուր աղա մեջլիսով։ Չաքմաչեն կտանի կդնի թագավորի հ'առեճ, կըսե.

— Թագավոր ապրած կենաս, հրաման տուր ես ղբուցիմ։

Թագավոր լէ կվերցու, կըսե.— Հրաման քըզի, հրամա՛ն, ղբուցե։

Թագավոր օր հրաման գիտա, էգի կխանչե. «Կուտու, կուտու». էնի չաքմաչի մեջեն շան պես կհաչա։ Կդառնա կըսե. «Փիշի, փիշի». էնի կատվի պես կնվնվա։ Կդառնա կէնե. «Հոշ, հոշ». էնի իշու պես կղռղռա։

Իդահախսուն լէ չաքմաչի դուռ կբանա. չաքմաչի մեջի թագավոր կիչքե օր հ'ինք թագավորի շուշաբանդ հ'օդի մեջ նստուկ է։

Դիվանի մախլուխաթ վըր էդ թագավորին կծիծղան, կվերցուն կըսին. «Դու իմա՞լ թագավոր իր օր դու մըզի շուաբ կճամբիր, կըսիր. «Հող քու պես թագավորի վրեն, քու խեղինեն կտանին, դու չկրնաս զաֆթիս դողեր». իմ գողեր հմալ գող ին օր քըզի քու դիվնի մեջեն գողցան, դու խաբար չէղար, հող քու պես թագավորի գլխուն էղնի»։

Գողցուկ թագավոր կըսե.— Հալալ էղնի քըզի ու քու գողուն։